



ԿԱՊՈՒՅՏ ՀԱՁ

Կապույտ հազը (պերտուսիս) վարակիչ հիվանդություն է, որը կարող է տարածվել, երբ մարդը հազում կամ փռչում է: Չպատվաստված մարդիկ, հատկապես նորածինները, կարող են շնչահեղձ լինելու ճիչեր արձակել, երբ հազի նոպաների միջև շունչ են քաշում: Այդ իսկ պատճառով հիվանդությունն անգլերեն սովորաբար կոչվում է «ճչացող հազ» (“whooping cough”): Կապույտ հազը կարող է լուրջ հիվանդություններ առաջացնել՝ հանգեցնելով հիվանդանոցում մնալուն և նույնիսկ մահվան, հատկապես 6 ամսականից փոքր նորածինների շրջանում:

ՈՐՈ՞ՇԷ ԵՆ ԿԱՊՈՒՅՏ ՀԱՁԻ ԱԽՏԱՆԻՇՆԵՐԸ

Կապույտ հազը (պերտուսիս) սովորաբար սկսվում է թեթև մրսածությանը բնորոշ ախտանիշներով՝ քթահոսություն կամ քթի փակվածություն, արցունքոտ աչքեր, փռչտոց և չոր հազ: Մեկ-երկու շաբաթ հետո մարդիկ սկսում են ունենալ հազի հանկարծակի նոպաներ, որոնք դժվար է դադարեցնել: Այս հազի նոպաները կարող են հանգեցնել փսխումի, շնչառության խնդիրների և շատ հոգևած լինելու զգացողության: Չպատվաստված երեխաները և նորածիններն ունենում են սաստիկ հազ, հաճախ շնչում են բարձր «ճչան» ձայնով: Դեռահասներից և մեծահասակներից շատերը չեն ունենում «ճչոցի» ձայն: Երկարատև ծանր հազը կարող է լինել մեծահասակների միակ ախտանիշը:

Որոշ նորածիններ կարող են ունենալ միայն մեղմ ախտանիշներ, ինչպիսիք են քթի փակվածությունը և քթահոսությունը: Սակայն շատերը կարող են դժվարությամբ շնչել կամ նույնիսկ ժամանակավորապես դադարել շնչել (ապնոէ): Նրանք կարող են նաև շատ հոգևած լինել և վատ ախորժակ ունենալ: Ախտանիշները կարող են շատ արագ վատանալ, ուստի կարևոր է բուժումը շուտ սկսել:

Չանգահարեք ձեր բժշկին կամ անմիջապես գնացեք մոտակա շտապօգնության բաժին, եթե ձեր երեխայի հազի նոպաները պատճառ են դարձել, որ նա՝

- Փսխի՝ դրա հետ ունենալով խմելու և հեղուկով իրեն ապահովելու դժվարության
- Ունենա շնչելու դժվարություն կամ կապտի
- Դառնա քնկոտ և դադարի շփվել ընտանիքի անդամների հետ

4 ամսականից փոքր երեխաները, որոնք ունեն շնչահեղձության ճիչերով հազ՝ կապույտ հազ, պետք է դիմեն լրացուցիչ բուժօգնության համար:

ՀԱՐԱԿԻՑ ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Նորածիններ՝

(հիմնականում 6 ամսականից փոքր)

- Ականջի վարակ
- Թոքաբորբ
- Ջրազրկում
- Ցնցումներ
- Գլխուղեղի վնասվածք
- Դանդաղ շնչառություն կամ շնչառության կանգ

Չաչահասներ՝

- Ճողվածք ստամոքսում
- Կոտրված կամ վնասված կողոսկրեր
- Մաշկի կամ աչքերի վնասված արյունատար անոթներ

Հաճախակի տրվող հարցեր (ՀՏՀ)

ԿԱՊՈՒՅՏ ՀԱՁ

ԻՆՉՊԵՄ Է ԱՅՆ ԲՈՒԺՎՈՒՄ

Բժիշկները հիվանդության բուժման համար կարող են հակաբիոտիկներ տալ: Շատ փոքրիկ նորածինները հաճախ բուժվում են հիվանդանոցում, քանի որ նրանք ավելի հավանական է, որ կունենան լուրջ առողջական խնդիրներ: Կարևոր է շուտ բուժել կապույտ հագը: Եթե կարծում եք, որ դուք կամ ձեր սիրելին կարող եք հիվանդ լինել դրանով, անմիջապես դիմեք ձեր բժշկին:



ԻՆՉՊԵՄ Է ԱՅՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՎՈՒՄ

Դրա կանխարգելման լավագույն միջոցը պատվաստվելն է: Երեխաներին առաջարկվող պատվաստանյութը DTaP-ն (ԱԿԴՓ) է: Այս անվտանգ և արդյունավետ պատվաստանյութը պաշտպանում է դիֆթերիայից, փայտացումից և կապույտ հագից: Լավագույն պաշտպանության համար երեխաները պետք է ստանան **DTaP** պատվաստանյութ 2, 4 և 6 ամսականում, 15-18 ամսականների միջև, և մինչև մասկապարտեզ գնալը՝ 4-6 տարեկանում: Նախադեռահասները (11-12 տարեկան) և մեծահասակները՝ ներառյալ երրորդ եռամսյակում գտնվող հղի կանայք, պետք է ստանան **Tdap-ի** (մեծահասակների ԱԿԴՓ) խթանիչ պատվաստանյութ, քանի որ պատվաստանյութից առաջացող պաշտպանվածությունը ժամանակի ընթացքում անհետանում է: Ծնողները և փոքրիկ երեխաներին խնամող մյուս մարդիկ պետք է Tdap պատվաստանյութ ստանան՝ իրենց և նորածինն պաշտպանելու համար:

ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչություն (LACDPH)
ph.lacounty.gov/pertussis

Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Կենտրոններ (CDC)
www.cdc.gov/pertussis/about/index.html

Մոտակայքում կլինիկա կամ բժիշկ գտնելու համար զանգահարեք Հանրային Առողջության տեղեկատվական գիծ 833-540-0473 հեռախոսահամարով:
Բաց է ամեն օր՝ առավոտյան 8-ից երեկոյան 8 –ը:

(Armenian)



COUNTY OF LOS ANGELES
Public Health